ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 21 » մայիս 2026թ. No 2905 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի կետ 1-ի, ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման կետ 170-ի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 01/2609-26 առ 18.05.2026թ. փորձագիտական եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Եվրասիական տնտեսական միության գրանցման և փորձաքննության կանոններին դույեի համապատասխանեցման (միայն Հայաստանում կիրառման համար) ընթացակարգով գրանցել երաշխավորված 5 դեղը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1)Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղրյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի

32-րդ և ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման 180-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Ուժը կորցրած ճանաչել նախկինում գրանցված Օրլոբին-ՆԵՈ N 21414/3/3, Պելեթրոցին Պլյուս N 21185 դեղերի գրանցման հավաստագրերը համաձայն եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 180-րդ կետի:

5.Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ.Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

6. Դեղի գրանցման ժամկետը սահմանվում է համաձայն եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 180-րդ կետի, հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Լ. ՆԱՆՈՒՇՅԱՆ

Recoverable Signature

X 

ԼԵՆԱ ՆԱՆՈՒՇՅԱՆ

Signed by: NANUSHYAN LENA 5114750164

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2026 թվականի մայիսի « 21 » - ի N 2905- Ա հրաման

Եվրասիական տնտեսական միության գրանցման և փորձաքննության կանոններին դույեի համապատասխանեցման (ռեֆերենտ երկիր) ընթացակարգով

գրանցված դեղերի ցանկ

| ՀՀ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Նոնպրես | էպլերենոն | դեղահատեր թաղանթապատ | 25մգ; (20/2x10/) բլիստերում, (30/3x10/) բլիստերում | Ադամեդ Ֆարմա Ս.Ա., 5 Մարշալկա Ջ. Պիլսուդսկիեգո փ., 95-200 Պաբիանիցե | Լեհաստան | Ադամեդ Ֆարմա Ս.Ա., 6Ա, Պիենկով, Մարիանա Ադամկևիչա փ., 05-152 Չոսնով | Լեհաստան | Դ | 24114 (021968) 15.05.2026 |
| 2 | Նոնպրես | էպլերենոն | դեղահատեր թաղանթապատ | 50մգ; (20/2x10/) բլիստերում, (30/3x10/) բլիստերում | Ադամեդ Ֆարմա Ս.Ա., 5 Մարշալկա Ջ. Պիլսուդսկիեգո փ., 95-200 Պաբիանիցե | Լեհաստան | Ադամեդ Ֆարմա Ս.Ա., 6Ա, Պիենկով, Մարիանա Ադամկևիչա փ., 05-152 Չոսնով | Լեհաստան | Դ | 24115 (021968) 15.05.2026 |
| 3 | ՕՐԼՈԲԻՆ-ՆԵՕ | ամիկացին (ամիկացինի սուլֆատ) | լուծույթ ներարկման/ կաթիլաներարկման | 500մգ/2մլ; (1) ապակե սրվակ, (5) ամպուլներ 2մլ | Հելփ Ս.Ա., Պեդինի Իոանինոն, Իոանինա, 45500 | Հունաստան | Մեդիկուս Ս.Ա., 10 Վալաորիտոու փ., 144 52 Մետամորֆոսի 2 | Հունաստան | Դ | 24116 (028719) 15.05.2026 |
| 4 | Դիմեկս | դիֆենհիդրամին (դիֆենհիդրամինի հիդրոքլորիդ), ամոնիումի քլորիդ | օշարակ | 9,96մգ/5մլ+99,6մգ/5մլ; 125մլ պլաստիկե շշիկ և չափիչ բաժակ | Սոֆարմա ԲԸ, Իլիենսկո շոսե փ. 16, 1220 Սոֆիա- բաց թողնման հսկող, Սոֆարմա ԲԸ, գ. Վրաբեվո. 5660, Լովեչի շրջան, Բուլղարիա- բալք արտադրող, փաթեթավորող, որակի հսկող | Բուլղարիա | Սոֆարմա ԲԸ, Իլիենսկո շոսե փ. 16, 1220 Սոֆիա | Բուլղարիա | ԱԴ | 24117 (030988) 15.05.2026 |
| 5 | Պելեթրոցին Պլյուս | դիոսմին, հեսպերիդին | դեղահատեր թաղանթապատ | 450մգ+50մգ; (30/2x15/) բլիստերում, (60/4x15/) բլիստերում | Հելփ Ս.Ա., Պեդինի Իոանինոն, Իոանինա, 45500 | Հունաստան | Հելփ Ս.Ա., 10 Վալաորիտոու փ., 14452 Մետամորֆոսի | Հունաստան | ԱԴ | 24118 (036187) 15.05.2026 |